ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 230-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 9-րդ հավելվածի 19-րդ կետի 24-րդ ենթակետը և 20-րդ կետը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին 2026 թվականի օգոստոս ամսվա ընթացքում հատուկ առաջադրանքները և աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի աշխատակիցներին պարգևատրել համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչությունում փորձագետ Գվիտոն Դավթյանին կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անհրաժեշտ գործառույթները:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

01.09.2026

Подписано: ARSENYAN VAHAGN 2708930639

Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

2026 թվական սեպտեմբերի 1

ք.Եղեգնաձոր

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզպետի

2026 թ. սեպտեմբերի 1-ի N [illegible] Ա որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի 6 աշխատակիցների պարգևատրման 1 /մեկ/ էջ

h/h	Ազգանուն անուն	Զբաղեցրած պաշտոն	Պարգևատրման գումարի չափը ՀՀ դրամ
1	Թադևոսյան Հակոբ	Մարզպետի խորհրդական	59280.00
2	Օհանյան Նելլի	Մարզպետի խորհրդական	59280.00
3	Ավետյան Սիմոն	Մարզպետի օգնական	56160.00
4	Վանյան Անի	Մարզպետի օգնական	56160.00
5	Հովհաննիսյան Հրաչյա	Մարզպետի տեղակալի օգնական	28526.00
6	Սահրադյան Աննա	Մարզպետի տեղակալի օգնական	37440.00
		Ընդամենը	**296846.00**
	երկու հարյուր ինսունվեց հազար ութ հարյուր քառասունվեց ՀՀ դրամ		